ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1436-Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Կոմիտասի փողոցի թիվ 26 տան բնակիչ՝ Պետրոս Միհրանի Մանուկյանի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 882116 տրված՝ 20.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 049992QHFMP5/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 14-րդ փողոց թիվ 5 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1437-Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 464 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Քրիստինե Աշոտի Թամազյանի լիազորված անձ Էդգար Վարդանի Թամազյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ Քրիստինե Աշոտի Թամազյանի սեփականության իրավունքով պատկանող /հիմք 30.08.2022թ. տրված թիվ 30082022-04-0022 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 20.08.2024թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023XJXP4E և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011XADB9AM/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 464 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 219.2քմ / 219.2քմ արտաքին, ներքին 183.1քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 464 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 219.2քմ / 219.2քմ արտաքին, ներքին 183.1քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 366 722 /երեք հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր քսաներկու / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1438-Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Քրիստինե Աշոտի Թամազյանի լիազորված անձ՝ Էդգար Վարդանի Թամազյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի թաղամասի թիվ 464 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ հիմք 30.08.2022թ. տրված թիվ 30082022-04-0022 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011XADB9AM/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս թիվ 464 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1439Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռուզաննա Գուրգենի Կարախանովայի լիազորված անձ Գևորգ Կառլենի Թադևոսյանի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 057124 տրված՝ 16.05.2000թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022ZYNBHNS/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 20-րդ փողոց թիվ 36 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1440-Ա

06 սեպտեմբերի 2024թ.

ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 06.12.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011RHM7LJU.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցում գտնվող ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00139հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 37/1 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 1441-Ա

06 սեպտեմբերի 2024թ.

ք. Էջմիածին

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023ZKDKKJ և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 06.12.2023թ. կազմված հատակագիծը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00139հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 13.9քմ / 13.9քմ արտաքին և 12.7քմ ներքին / մակերեսով ավտոտնակը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00139հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 13.9քմ / 13.9քմ արտաքին և 12.7քմ ներքին / մակերեսով ավտոտնակը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցում գտնվող 13.9քմ / 13.9քմ արտաքին և 12.7քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00139հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Ազիզ Պատվականի Խաչատրյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1442-Ա

06 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ /ՆԱԽԿԻՆ ՊԵՏ' ՏՆԿԱՐԱՆ/ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 22ա շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Նարինե Եղիազարի Հարությունյանը իրեն և Գևորգ Վաչագանի Մաթևոսյանին պատկանող /հիմք՝ <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 11.04.2019թ. տրված N Ամ-363/2 արխիվային քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 27.03.2024թ. տրված թիվ 1567 քաղվածք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 17.05.2024թ. հաստատված թիվ 3397 և 3398 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրեր/,Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1060-0018/, 0.22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 27.08.2024թ. թիվ 19 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1060-0018/, 0.22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MUNICIPALITY РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ 04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1443-Ա

06 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ /ՆԱԽԿԻՆ ՊԵՏ՝ ՏՆԿԱՐԱՆ/ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 22ա շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Նարինե Եղիազարի Հարությունյանը իրեն և Գևորգ Վաչագանի Մաթևոսյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 27.03.2024թ. տրված թիվ 1567 քաղվածք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 17.05.2024թ. հաստատված թիվ 3397 և 3398 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրեր/,Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1060-0018/, 0.22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 27.08.2024թ. թիվ 19 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1060-0018/, 0.22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1444-Կ

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Գայի փողոցի թիվ 13 տան բնակիչ՝ Միշա Սերգեյի Իսկանդարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 891976 տրված 06.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040223CNTCL9/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 27-րդ փողոց թիվ 16 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1445-Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ջ. Բայրոնի փողոցի թիվ 6/1 տան բնակիչ՝ Մեսրոպ Վոլոդյայի Գասպարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 7-րդ փողոցի թիվ 19 և Ոսկեհատ գյուղի 7-րդ փողոցի թիվ 21 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ թիվ 27082024-04-0053 տրված՝ 27.08.2024թ., թիվ 27082024-04-0056 տրված՝ 27.08.2024թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040227SRNCCZ/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 7-րդ փողոց, թիվ 19-21 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 1446 Ա

06 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

**«Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 62/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 7/2, 7/3 հասցեում՝ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող բենզալցակայանի տարածքում, «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ՝ հեղուկ գազի լցակետի և մետաղական կոնստրուկցիայի տեղադրման շինարարական աշխատանքներ իրականացնելու համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, պարզեց, որ

«Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերությունն՝ ի դեմս տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանի (հասցե՝ ք.Երևան, Աջափնյակ, Նազարբեկյան թաղ., թիվ 12 /17, տնօրենի հասցե՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Րաֆֆու փող., թիվ 43 շենք, թիվ 59 բն., իրավախախտման վայր՝ ք. Էջմիածին, Երևան-Էջմիածին մայրուղի թիվ 7/2 և թիվ 7/3 , պետական ռեգիստրի գրանցման համար՝ 271.110.1045443, ՀՎՀՀ՝ 01286857), «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող /հիմք՝ 25.04.2024թ.-ի անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը /գրանցման գրանցամատյան 6938 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30042024-04-0100/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 7/2, 7/3 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ հեղուկ գազի լցակետի և մետաղական կոնստրուկցիայի տեղադրման շինարարական աշխատանքներ, ինչի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Արազ Պապիկյանի 07.08.2024թ.-ի թիվ ՔՏՄ/17.4/15080-24 գրության և կից նյութերի հիման վրա 2024 թվականի օգոստոսի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանի մասնակցությամբ:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

1. ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Արազ Պապիկյանի 07.08.2024թ.-ի թիվ ՔՏՄ/17.4/15080-24 գրությունը և կից նյութեր:
2. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 09.08.2024 թվականին կազմված թիվ 4 արձանագրությունը, տեղազննության ակտը և լուսանկարները:
3. Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալի 23.08.2024 թվականի «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 7/2, 7/3 հասցեում <<Է.Ս.Է. ՕԻԼ>>

ՍՊԸ-ի կողմից բենզալցակայանի տարածքում իրականացվող ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 1368Ա որոշումը:

4. 25.04.2024թ.-ի անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը /գրանցման գրանցամատյան 6938/:

5.Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30042024-04-0100:

6. Հանձնաժողովի 04.09.2024թ. թիվ 62/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

7.Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 06.09.2024 թվականին կազմված տեղազննությունը և տեղազննության վայրի լուսանկարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերությունը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 7/2, 7/3 հասցեում, «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող հողամասում առանց թույլտվության կառուցել է /տեղադրել/՝ հեղուկ գազի լցակետի և մետաղական կոնստրուկցիայի կառուցման /տեղադրման/ աշխատանքներ:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 09.08.2024 թվականին կատարվել է տեղազննություն և պարզվել է, որ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից կառուցվել է /տեղադրվել է/ երկաթբետոնի հիմք և տեղադրվել է հեղուկ գազի լցակետ/դիսպանսեր/, ինչպես նաև կառուցվել են երկաթե կոնստրուկցիաներ:

Հիմք ընդունելով վերագրյալը վարչական իրավախախտման վերաբերյալ կազմվել է արձանագրություն, որտեղ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանը տալով բացատրություն հայտնել է, որ համաձայն չէ արձանագրության հետ, քանի որ երկաթ-բետոնե շինարարական աշխատանքներ չեն կատարվել, ավելին շուրջ հինգ տարի տարածքում շինարարական աշխատանքներ չեն կատարվել, քանի որ տվյալ տարածքում շուրջ քսան և ավելի տարի գործել է գազի լցակայան, որոշել է գոյություն ունեցող բետոնային հիմքի վրա տեղադրել է նոր դիսպենսեր, վերազինել հին սարքավորումները և որքանով, որ տեղյակ է դիսպենսեր տեղադրելը քաղաքաշինական նորմերով չին. թույլտվություն չի պահանջում:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալը ընդունել է 23.08.2024 թվականի «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 7/2, 7/3 հասցեում «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանի կողմից բենզալցակայանի տարածքում իրականացվող ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 1368Ա որոշումը, որի փոստային ծառայության միջոցով հանձնվել է «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանին /հիմք փոստային անդորրագիր ALO124146439 AM/:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի օգոստոսի 7-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 4-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է՝ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վարդան Ուրարտուի Մկրտչյանի:

Վերջինս ներկայանալով վարչական վարույթի նիստին հայտարարեց, որ որքանով, որ տեղյակ է օրենքով սահմանված կարգով գազի դիսպաների ամրացման համար պատկան մարմիններից որևէ թույլտվության անհրաժեշտություն չկա: Ավելին, եթե իր կողմից կատարվածը լիներ ոչ օրինաչափ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հեղուկ գազի վաճառքի թույլտվություն չէր ստանա: Ինչ վերաբերում է տեղադրված սյուներին այն տեղադրված է ևս ոչ թաց շինարարական գործողություններով, այլ ամրացված է նախկին հիմքին, իսկ մետաղական կոնստրուկցիա նշումը ևս դիրքորոշման խնդիր է: Դրանք լուսավորության են ծառայելու: Այսպիսով, իր դիրքորոշումն այն է, որ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից որևէ շինարարական աշխատանքներ չեն արվել, որպիսի պահանջվեին համապատասխան թույլտվություններ: Նիստի ընթացքում քննարկելով ամբողջը կրկին կարծում է, որ դիրքորոշման և մոտեցման հարց է:

Ի պատասխան իրեն ուղղված հարցին, հայտնել է, որ դիսպաների ամրացումն արվել է «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից: Ուստի ՔՏՄ/17.4/15080-24 գրությանը 07.08.2024 թվականին կազմված անհիմն է և ենթակա է վերանայման:

Վարչական լսումներից հետո Վարդան Ուրարտուի Մկրտչյանը կապ է հաստատել համայնքապետարանի հետ և խնդրել է իրեն ժամանակ տրամադրել իրավախախտման հետևանքները վերացնելու համար:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 06.09.2024 թվականին կրկին կատարվել է այց իրավախախտման վայր և կազմվել է տեղազննության արձանագրություն:

Համաձայն 06.09.2024 թվականին կազմված իրավախախտման վայրի տեղազննության արձանագրության՝ «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ապօրինի կառուցված /տեղադրված/ հեղուկ գազի լցակետը ապամոնտաժվել է և տարածքը բերվել է նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինքնակամ ջրավազան հիմնելը և հետագայում այն քանդելը, իրավախախտման վնասակար հետևանքները վերացնելը, այդ թվում պատճառած հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով 06.09.2024թ.-ին տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրիհիսնապատիկից հազարիինգհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը...:

Տվյալ պարագայում «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ն դադարեցրել է շինարարական աշխատանքները, ապամոնտաժել ապօրինի կառուցված /տեղադրված/ հեղուկ գազի լցակետը, տարածքը բերվել է նախկին տեսքի, ուստի տվյալ իրավախախտման մասով որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած վարքագիծը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ կատարված գործողությունները:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած վարքագիծը՝ իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Է.Ս.Է. ՕԻԼ» ՍՊ ընկերության նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ  1447-Ա

« 06 » սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վաղարշապատի համայնքապետարանի և «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին» ՊՄ-ի /Վարձակալ/, երրորդ կողմ՝ Վարչապետի աշխատակազմի միջև 14.10.2022թ. /սեղանամատյան 394/ կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 6.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Երկարաձգել 14.10.2022թ. /սեղանամատյան 394/ կնքված Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի 0 հասցեում Վաղարշապատի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտնվող, II.4/05 համարակալումներով ընդհանուր 36քմ (երեսունվեց) մակերեսով ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրի ժամկետը մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2.Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 2.2 կետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագիրը գործում է մինչև 01.09.2027 թ. /մեկը սեպտեմբերի երկու հազար քսանյոթ թվականը/» :

3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

4. Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Վաղարշապատի համայնքապետարանի և «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին» ՊՄ-ի /Վարձակալ/, երրորդ կողմ՝ Վարչապետի աշխատակազմի միջև վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1448-Ա

09 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ջվարթնոց թաղամասի թիվ 9 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ՝ Արմեն Մարտիկի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մանուշյան փողոցի թիվ 9ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 29.08.2024թ. կնքված թիվ 7280 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011CFZHNMF/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք,
ք. Էջմիածին Մ. Մանուշյան փողոց, թիվ 9/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ    ԹԻՎ 1449Ա

09 սեպտեմբերի 2024թ.                                        ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ. Նալբանդյան փողոցի թիվ 62ա տան բնակիչ՝ Մարտիրոս Եսայու Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Նալբանդյան փողոցի թիվ 60/1 և Սուրբ Մարիանեի փողոցի թիվ 8 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ թիվ 28082024-04-0042 տրված՝ 28□08□2024թ., թիվ 02082024-04-0056 տրված՝ 02.08.2024թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011HUXERPV/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սուրբ Մարիանեի փողոց թիվ 8 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                        Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1450-Ա

09 սեպտեմբերի 2024թ. ք.էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Հովհաննես Մարատի Կարապետյանի լիազորված անձ՝ Էդուվարդ Սարգսի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 61բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 15.08.2024թ. կնքված թիվ 6529 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011ZF7GMD8/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց թիվ 61/2 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1451-Ա

09 ապրիլի 2024թ.

ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ /ՆԱԽԿԻՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄՐԱՀԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Միչուրինի փողոցի թիվ 1բ տան բնակիչ Արտակ Ռաֆիկի Պողոսյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 26.10.2005թ. տրված թիվ 1223997 սեփականության վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 03.01.2022թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20229OPSJD Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի /նախկին Սպանդարյան/ փողոցի թիվ 27/7 հասցեում գտնվող 0.0142հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 272.8քմ / 272.8քմ արտաքին, ներքին 229քմ / մակերեսով սպասարկման սրահը օրինականացնելու և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի /նախկին Սպանդարյան/ փողոցի թիվ 27/7 հասցեում գտնվող 0.0142հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի /նախկին Սպանդարյան/ փողոցի թիվ 27/7 հասցեում գտնվող 0.0142հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 272.8քմ / 272.8քմ արտաքին, ներքին 229քմ / մակերեսով սպասարկման սրահը ճանաչել օրինական, որի համար սահմանված 1 263 610 / մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր տաս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1453-Ա

09 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Պետրոզավոդսկի փողոցի թիվ 54 բնակելի տան բնակիչ՝ Աշոտ Լևիկի Ղազարյանի դիմումն իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ թիվ 13102021-04-0122, տրված՝ 13.10.2021թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 21.08.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ /04011YZ6BFMH, 04011KNXANER, 04011VHGCVTG, 04011M4ARM7N, 04011VWALA88/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 7/8 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 20/7 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 20/8 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 20/9 հողամաս,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 20/10 հողամաս,

Առանձնացվող հատված 5-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 20/11 հողամաս,

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT 04440307

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1453Ն

09 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցի թիվ 40ա տան բնակիչ՝ Արմեն Նորայրի Մելքոնյանի դիմումը, իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1130202 տրված՝ 17.01.2005թ., ՀՀ վարչական դատարանի 20.06.2024թ. վճիռ վարչական գործ թիվ ՎԴ/5321/05/23 «Ավագ Ավագյան Գագիկի » ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 28.08.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011MQUUCJZ, 04011BNQZURB/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Արարատյան փողոց, թիվ 44/4 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Արարատյան փողոց, թիվ 44/5 շինություն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1454-Ա

09 սեպտեմբերի 2024թ.                                                                                    ք. Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելքվ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ.Թումանյան փողոցի թիվ 1-ին փակուղու թիվ 7 տան բնակիչ Ստեփան Օնիկի Ստեփանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 03.03.2012թ. տրված թիվ 10052024-04-0082 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 16/3 հասցեում գտնվող 0.052հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել խառը կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 16/3 հասցեում գտնվող 0.052հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել խառը կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                        Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1455-Ա

09 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Թումանյան փողոցի 1-ին փակուղու թիվ 7 տան բնակիչ Ստեփան Օնիկի Ստեփանյան դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10052024-04-0082 տրված՝ 03.03.2012թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.08.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040115NKFSKA, 04011NMBUBQL, 04011WK3FZHL, 04011EFRSCA5, 04011ADZJEX3, 040119WWR2AP, 040117GCHMFQ, 040117T4MMPL, 04011RSCXXNS/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Խորենացու փողոցի թիվ 16/3 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 1 բնակարան,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 2 բնակարան,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 3 բնակարան,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 4 բնակարան,

Առանձնացվող հատված 5-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 5 բնակարան,

Առանձնացվող հատված 6-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 6 բնակարան,

Առանձնացվող հատված 7-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 7 բնակարան,

Առանձնացվող հատված 8-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 8 բնակարան,

Առանձնացվող հատված 9-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 16/3 շենք թիվ 9 տարածք,

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1456Ա

09 ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20234WVKBF և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 29.12.2023թ. կազմված հատակագիծը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0142հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 83քմ /83քմ արտաքին և 68.7քմ ներքին/ մակերեսով օժանդակ շինությունները համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0142հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 83քմ /83քմ արտաքին և 68.7քմ ներքին/ մակերեսով օժանդակ շինությունները:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցում գտնվող ընդհանուր 83քմ /83քմ արտաքին և 68.7քմ ներքին/ մակերեսով օժանդակ շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0142հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Հակոբ Մանուկի Ղազարյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ